



Համախմբում պետության հիմնասյուների առանցքով

Տրամաբանական է, որ Արցախի կրած ծանր պարտությունից հետո երկրում ստեղծված իրավիճակը բնականոն դարձնելու եւ պատերազմի հետեւանցով առաջացած վերքերն ամոքելու համար պետական համակարգը պետք է նոր պայմաններին համապատասխան մոտեցումներ եւ հայեցակարգեր ցուցաբերի: Մի բան, որ վերջին ամիսների ընթացքում տեղի է ունենում Արցախում: Արդեն իսկ պատրաստ է Արցախի նոր Սահմանադրության նախագիծ: Նախատեսվում է, որ հաջորդ տարվա առաջին ամիսներին Սահմանադրության փոփոխության համար տեղի ունենա հանրաքվե: Պետական կառավարման համակարգում լայն լիազորություններով նշանակվեց նոր պետնախարար:

Այս բոլորը տեղի է ունենում քաղաքական ներքին համախոհության մթնոլորտում, որի ակնառու վկայությունը դարձավ հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած համարացախյան բազմահազարանոց հանրահավաքը:

Հանրության մոտ կան եւ սպասելիքներ, եւ ակնկալիքներ, իսկ այս օրերին որեւէ պաշտոնի ստանձնումը կրկնակի ծանր պատասխանատվություն է պահանջում՝ առաջին հերթին հանրության մոտ ստեղծված ընկճվածությունը փարատելու համար եւ, զուգահեռաբար, կենցաղային ծանր պայմանների բարելավման եւ ապագայի նկատմամբ հույսի ներշնչման առումով:

Հանրային վերոնշյալ ակնկալիքների բավարարման համար ամենագործնական եւ իր արդյունավետությունն ապացուցած կարեւորագույն կառույցը պետական համակարգն է: Արցախի անկախության ավելի քան 30 տարիների ընթացքում ստեղծվել է պետական կառավարման համակարգ՝ իր բոլոր ոլորտներով եւ մասնագիտական ենթաբաժանումներով: Պետությունը դիտարկվում է որպէս ամբողջական համակարգ, որի բոլոր ենթակառուցվածքները փոխկապակցված են եւ լրացնում են իրար: Անշուշտ, կարելու է բոլոր ենթակառուցվածքները, սակայն Արցախի նման պատերազմական պայմաններում գտնվող երկրում առաջնայինը պաշտպանական անվտանգային համակարգն է:

Պաշտպանական համակարգը նախ եւ առաջ Արցախի Պաշտպանության բանակն է, ապա՝ Ազգային անվտանգության ծառայությունը, Ոստիկանությունն ու ԱԻՆ-ը:

Պաշտպանության բանակը, բացի պաշտպանական դեր ունենալուց, Արցախի ժողովրդի համար ունի բարոյական եւ հոգեմտավոր արժեք: Յուրաքանչյուր արցախցի Արցախի Պաշտպանության բանակի ստեղծման, պահպանման եւ զարգացման գործում իր ներդրումը, նվիրումը, արյունն ու քրտինքն ունի:

Այդ առումով՝ Արցախի Պաշտպանական բանակը Արցախի Հանրապետության հիմնասյունն է:

Իզուր չէ, որ թշնամին, բոլոր պետական կառույցներն անտեսելով, նախ եւ առաջ պահանջում է Արցախի բանակի կազմալուծում, քանի որ մեր հակառակորդը եւս հասկացել է, որ Արցախի պետական համակարգն անիմաստ է դառնում առանց բանակի գոյության:

Արցախի պետական համակարգում յուրաքանչյուր փոփոխություն պետք է հիմնված լինի 30 ամյա պետական ավանդույթների եւ պետության կազմության գաղափարական ակունքների ու հիմնասյուների պահպանման վրա:

Միայն այսպէս հնարավոր կլինի պահպանել համախմբվածությունն ու միասնականությունը, որոնք մեր պայմաններում առանցքային կարեւորություն են ներկայացնում:



Ֆրանսիայի Սենատի բանաձեւը Ադրբեջանի դեմ պատժամիջոցներ կիրառելու առաջարկով

Նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի Սենատը ձայների՝ 295 կողմ, 1 դեմ հարաբերակցությամբ Ադրբեջանի դեմ պատժամիջոցներ սահմանող բանաձեւ է ընդունել:

Բանաձեւի հեղինակներն են Բրունո Ռետայոն, Պատրիկ Կանտերին, Էրվե Մարսեյը, Էլիան Ասասին: Նրանց են միացել նաեւ պատգամավորներ Զիրստիան Կամբոն եւ Ժիլբեր-Լյուկ Դեիկազը: Նշենք, որ այս սենատորները 2020 թվականին Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչող բանաձեւ էին մշակել:

Փաստաթղթի հեղինակները վկայակոչում են Ֆրանսիայի Սահմանադրության (ընդունվել է 1945 թվականի հունիսի 26-ին) 34-1 հոդվածը, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, 1949 թվականի ապրիլի 4-ի Հյուսիսատլանտյան պայմանագիրը, 1969 թվականի հունվարի 4-ին ուժի մեջ մտած ռասայական խտրականության բոլոր տեսակների վերացման մասին միջազգային կոնվենցիան, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 2005 թվականի սեպտեմբերի 16-ի 60/1 բանաձեւը, ինչպէս նաեւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը:

Ֆրանսիայում ՀՀ դեսպանության ֆեյսբուքյան էջը հրապարակել է Ֆրանսիայի Սենատի ընդունած բանաձեւի մի քանի դրույթներ.

- պահանջում է հեռացնել Ադրբեջանի զինված ուժերը Հայաստանի սուվերեն տարածքից եւ հարգել Հայաստանի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը, - կոչ է անում ազատ արձակել բոլոր հայ ռազմագերիներին եւ ապահովել նրանց վերադարձը հայրենիք,

- առաջարկում է Ֆրանսիայի կառավարությանը, Եվրոպական գործընկերների հետ համագործակցաբար, պատասխան դիվանագիտական եւ տնտեսական միջոցներ նախատեսել Ադրբեջանի կողմից իրականացված ագրեսիան պատժելու

նպատակով, այդ թվում՝ կիրառել պատժամիջոցներ, որոնք կթիրախավորեն Ադրբեջանի իշխանությունների ունեցվածքը, ինչպէս նաեւ կնախատեսեն Եմբարգո կիրառել Ադրբեջանից գազի եւ նավթի ներկրման հարցում,

- վերահաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման անհրաժեշտությունը եւ առաջարկում կառավարությանը Լեռնային Ղարաբաղում հիմնել հումանիտար գրասենյակ,

- առաջարկում է կառավարությանը դիտարկել Հայաստանի պաշտպանական կարողությունների ամրապնդմանն աջակցելու հնարավորությունը:

Նշենք, որ թե՛ ԼՂ անկախության ճանաչման բանաձեւը, թե՛ Բաքվի դեմ պատժամիջոցների կիրառման հարցի քննարկումը խորհրդատվական բնույթ են կրում եւ պարտադիր իրավական ուժ չունեն Ֆրանսիայի կառավարության համար: Պատժամիջոցների կիրառման հարցը կորոշի կառավարությունը:

Ֆրանսիայի արտգործնախարարության ներկայացուցիչ Օլիվիե Բեիտը չառարկեց բանաձեւի ընդունմանը, սակայն նաեւ չհստակեցրեց՝ արդյո՞ք կառավարությունը կգնա պատժամիջոցների ճանապարհով: «Աշխարհում որեւէ երկիր ավելին չի անում Հայաստանին աջակցելու համար», - հայտարարել է նա:

Ֆրանսիայի Սենատի ընդունած բանաձեւը ողջունել են ԱՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը, «Արցախ-Ֆրանսիա» Բարեկամության շրջանակի անդամ պատգամավորները, ԱՀ պետական նախարար Ռուբեն Վարդանյանը, Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը եւս ողջունել է ընդունված բանաձեւը: «Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը բարձր է գնահատում

Ֆրանսիական Սենատում միաձայն ընդունված բանաձեւը, որը խիստ դատապարտում է ադրբեջանական ագրեսիան: Դեմ է քվեարկել միայն ադրբեջանամետ եւ Ալիեւների կլանի մտերիմ Նատալի Գուլեն, որի կոչում-պացված լինելն արդեն ակնհայտ է բոլորի համար: Այս բանաձեւը եւս մեկ անգամ ապացուցում է, որ Հայաստանի եւ Արցախի ժողովուրդների անվտանգության եւ իրավունքների հարցի շուրջ կա Ֆրանսիական քաղաքական կոնսենսուս, մասնավորապէս՝ օրենսդրական մակարդակում: Եվ մենք առաջիկա օրերին սպասում ենք համանման բանաձեւի ընդունմանը Ֆրանսիայի Ազգային ժողովում: Այս բանաձեւը Ֆրանսիայի կառավարության վրա առավել բարձր ճնշում է պարտավորություն կլինի, որպէսզի իր Եվրոպացի գործընկերների հետ ի վերջո պատժամիջոցներ ձեռնարկի ադրբեջանական ագրեսորի դեմ: Այս հարցում Ֆրանսիայի հայ համայնքը, Հայ դատի հանձնախումբը եւ Ֆրանսիացի պատգամավորները միայնակ կլինեն, եթե Հայաստանի իշխանություններն ու հայաստանյան դիվանագիտությունը չգործեն նույն ուղղությամբ», - ասվում է Հայ դատի հանձնախմբի տարածած հայտարարության մեջ:

Հիշեցնենք՝ Ֆրանսիայի Սենատը 2020 թվականի նոյեմբերին բանաձեւ ընդունեց, որով կոչ էր անում կառավարությանը ճանաչել Լեռնային Ղարաբաղը: Բանաձեւի ընդունմանը կողմ քվեարկեց 305 սենատոր, դեմ՝ մեկը: Սակայն Ֆրանսիայի ԱԳՆ-ն հրաժարվեց ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Նախկին պետքարտուղար Ժան-Բատիստ Լեմուանը հայտարարեց, որ Ֆրանսիայի կողմից Լեռնային Ղարաբաղի միակողմանի ճանաչումը ոչ մեկին օգուտ չի բերի՝ ոչ Հայաստանին, ոչ Ղարաբաղի բնակիչներին, ոչ Եվրոպային, ոչ էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրներին:

Ընտրական օրենսգրքում կատարվել են փոփոխություններ

Լոյտմբերի 15-ին կայացած Արցախի Զանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստում քննարկվել է 27 կողմ ձայնով ընդունվել է Արցախի Զանրապետության նախագահի կողմից օրենսդրական նախագիծը՝ «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Յանքաբերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագիծերի փաթեթը:

Փոփոխությունները ներկայացրել է ԱԶ արդարադատության նախարար Ժիրայր Միրզոյանը: Նախագծերի ընդունումը, ըստ զեկուցողի, պայմանավորված է Արցախի Զանրապետության բռնազավթված տարածքների՝ Արցախի Զանրապետության քաղաքացիների

ընտրական իրավունքի փաստացի իրականացումն ապահովելու անհրաժեշտությամբ:

- օրենքը նախատեսում է՝
- հանել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում Արցախի Զանրապետության քաղաքացիների անձնական տվյալների որոնման հնարավորությունը,
- Արցախի Զանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմել համայնքի, բացառությամբ բռնազավթված տարածքների, ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի,
- Հայաստանի Զանրապետությունում գտնվող՝ բռնազավթված տարածքների Արցախի Զանրապետության քաղաքացիություն ունեցող ընտրողները համապետական ընտրությունների ժամանակ

քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ լիազոր մարմին ներկայացնեն դիմում ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Զանրապետությունում գտնվելու վայրի հասցեն,

- ընտրողների ցուցակները կազմել ըստ ընտրողների հաշվառման վայրի հասցեների, իսկ Արցախի Զանրապետությունում կամ Հայաստանի Զանրապետությունում գտնվող՝ բռնազավթված տարածքների Արցախի Զանրապետության քաղաքացիություն ունեցող անձանց ընտրողների ցուցակները՝ ըստ գտնվելու վայրի հասցեների,
- ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ կազմակերպել Ստեփանակերտ քաղաքում, Արցախի Զանրապետության շրջաններում, Հայաստանի Զանրապետությունում՝ Արցախի Զանրապետության քաղաքացիների դիմումների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ներկայացրած ցուցակների հիման վրա:

Օրենքի փաթեթով նախատեսվում է հանրաքվե նշանակել Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ, որն էլ անցկացվում է հանրաքվե նշանակելուց ոչ շուտ, քան 30 եւ ոչ ուշ, քան 45 օր հետո, իսկ հանրաքվեի դրվող նախագիծը հրապարակվում է Լոյտմբերի իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում՝ հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ:

Հայաստանը չպետք է հայտնվի Ռուսաստան-Արեւմուտք բախման կիզակետում

Լոյտմբերի 5-ին Ֆրանսիայի հրապարակում տեղի է ունեցել Միասնության հանրահավաք՝ մասնակցություն Արցախի, որին մասնակցել են բազմաթիվ քաղաքական ուժեր, ազգային-հասարակական գործիչներ: Հայտարարության տեքստն ընթերցել է մտավորական գուրգեն Մելիքյանը:

«Մենք ողջունում ենք արցախահայ մեր ջուլյերի ու եղբայրների պայքարը շարունակելու հավաքական կամքը:

Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում. այս գաղափարն է ՀՀ անկախության հռչակագրի հիմքում, եւ մենք այն պաշտպանելու ենք ամեն գնով:

Հայաստանի օրվա իշխանությունների վարած քաղաքականությունը

- վտանգում է Հայաստանի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, ՀՀ անկախության հռչակագրում ամրագրված դրույթների կյանքի կոչումը,
- սպառնում է հայկական Արցախի գոյությանը, արցախահայերի անտարելի իրավունքների իրացմանը,
- մեր երկիրը ներքաշում է աշխարհաքաղաքական արկածախնդրության մեջ,
- փչացնում է մեր հարաբերությունները դաշնակից ու բարեկամ երկրների հետ,
- բերում է նոր պատերազմ, կորուստներ, կապիտուլյացիա:

Հայաստանը չպետք է հայտնվի Ռուսաստան-Արեւմուտք բախման կիզակետում: Արտաքին կողմնորոշումների քաղաքականությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմքում դնելը խիստ վտանգավոր է եւ անընդունելի:

Մենք կողմ ենք հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանը, բայց առանց նախապայմանների, ուժի կիրառման կամ դրա սպառնալիքի:

«Չանգեզուրի միջանցք»-ի պահանջելու թուրք-ադրբեջանական պահանջը չունի որեւէ իրավական հիմք:

Ադրբեջանը պետք է կատարի իր պարտավորությունները. վերադարձնի հայ ռազմագերիներին, պահվող այլ անձանց, դուրս բերի իր գործերը ՀՀ ինքնիշխան տարածքից:

Թուրքիան չպետք է ՀՀ-ի հետ խուսի վերջնագրերի լեզվով:

Մեր առաջնային խնդիրները պետք է լինեն հանրային համերաշ-

խության ապահովումը, բանակի վերականգնումը, Հայաստանի ու Արցախի անվտանգության ապահովումը, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության վերականգնումը:

Մենք անընդունելի եւ հակապետական ենք համարում «Արցախը հանձնենք, որ Հայաստանում խաղաղ ապրենք» օրվա իշխանության քաղաքականությունը:

Համաձայն ՀՀ Գերագույն խորհրդի 1992թ. հունիսի 8-ի որոշման՝ Հայաստանի Զանրապետության համար անընդունելի միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Զանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում:

Մենք արձանագրում ենք.

- ներկայումս հայ ժողովրդի թիկունքում բանակցվում են մեզ համար սկզբունքային եւ ճակատագրական նշանակություն ունեցող հարցեր,
- Հայաստանի օրվա իշխանությունը՝ ամբողջությամբ դրժելով իր իսկ նախընտրական խոստումները եւ կառավարության ծրագիրը, այդ բանակցություններում գնում է Հայաստանի ինքնիշխանությունը, Արցախի գոյությունը հարցականի տակ դնող պայմանավորվածություններ,
- այդ բանակցությունները հակասում են միջազգային իրավունքի սկզբունքներին, քանի որ ընթանում են Ադրբեջանի կողմից ուժի կիրառման եւ դրա սպառնալիքի պայմաններում:

Մենք հայտարարում ենք, որ Հայաստանի Զանրապետության Սահմանադրության, ներպետական օրինական ընթացակարգերի եւ միջազգային իրավունքի նորմերի խախտումով Հայաստանի օրվա իշխանությունների գրավոր թե՛ բանավոր հայտարարությունները, խոստումները եւ համաձայնությունները չունեն որեւէ իրավական ուժ եւ անխուսափելի իշխանափոխությունից անմիջապես հետո դիտվելու են առջինը:

Մեր համոզմամբ՝ Հայաստանը միջազգային հարաբերություններում պետք է հանդես գա նոր բանակցով:

Կոչ ենք անում Հայաստանի Զանրապետության եւ Արցախի Զանրապետության քաղաքացիներին, հայ ժողովրդին՝ չտրվել հիասթափության ու հոռետեսության, պատրաստ լինել պայքարելու՝ հանուն Հայաստանի, հանուն Արցախի, հանուն մեր երկրի անվտանգ եւ բարեկեցիկ ապագայի»:

Հայաստան-Արցախ երիտասարդական ֆորումի մասնակիցները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ

Սույն թվականի Լոյտմբերի 12-ին Ստեփանակերտում կայացել է Հայաստան-Արցախ երիտասարդական ֆորում, որի ավարտին մասնակիցները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որին մասնակցում էին նաեւ Արցախի եւ Հայաստանի ընդդիմադիր կուսակցությունների երիտթեւերն ու Արցախի մի շարք հասարակական կազմակերպություններ եւ ուսանողական խորհուրդներ:

«Արձանագրելով՝ ՀՀ իշխանությունների կողմից շրջանառության մեջ դրված «խաղաղության դարաշրջան» գաղափարը, որն արժանապատիվ խաղաղության հետ ընդհանրապես որեւէ աղերս չունի եւ իրականում Արցախն ու Հայաստանը տանում է նոր պատերազմի ճանապարհով,

Հաշվի առնելով՝ ՀՀ իշխանությունների հարմարվողական, զիջողական, կրավորական կեցվածքը, որոնք իրենց գործողություններով խուճապ եւ պարտվողական տրամադրություններ են ստրմանում հասարակության, մասնավորապես երիտասարդության շրջանում,

Փաստելով, որ այս օրհասական ժամանակահատվածում անհրաժեշտ է միավորվել եւ համախմբել համայն հայության ռեսուրսները՝ հանուն միասնական նպատակների ու պայքարի, որը եւս մեկ անգամ կվերահաստատի, որ Արցախն ու Հայաստանն ունեն կարմիր գծեր, որոնց հատումը նոր ողբերգությունների է հանգեցնելու, որի մասին բազմիցս հայտարարվել է, այդ թվում՝ նաեւ ապրիլի 14-ի եւ հոկտեմբերի 30-ի ԱԶ Ազգային ժողովի եւ Արցախի բոլոր ուժերի կողմից ընդունված եւ հաստատված հայտարարություններով, ինչպես նաեւ Արցախի ժողովրդի աննախադեպ միասնական հանրահավաքով,

Համոզված լինելով, որ ՀՀ իշխանություններն ի գործու չեն հայանապատ քայլեր եւ գործողություններ իրականացնելու,

Ականատես լինելով՝ ՀՀ իշխանությունների՝ Արցախը հանձնելու եւ ՀՀ տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը գիշելու քաղաքականությանը՝

Հայտարարում ենք.

1. Հայաստանի Զանրապետության վարչապետը եւ նրան սպասարկող վարչախումբը պարտավոր են անհապաղ եւ ամբողջությամբ դադարեցնել թուրք-ադրբեջանական տանդեմի հավակնությունները բավարարելուն ուղղված ստորացուցիչ գործընթացը:

2. Դատապարտում ենք հայ ժողովրդին պառակտող հակազգային բոլոր գործողությունները: Ստեփանակերտում կայացած բազմախոսակարան հանրահավաքը եւս մեկ անգամ ընդգծեց Արցախի պետականության պահպանման եւ հզորացման հարցում հասարակության եւ քաղաքական ուժերի միասնականությունն ու դրա անհրաժեշտությունը:

3. Հայաստանի իշխանությունները պետք է վերջ դնեն Հայաստանն ու Արցախը տարածաշրջանային, աշխարհաքաղաքական

ավանտյուրաների մեջ ներքաշելու գործողություններին:

4. Արցախի Զանրապետության իշխանությունները պարտավոր են հստակ գնահատական տալ Հայաստանի Զանրապետության վարչապետի եւ իշխանությունների ոչ հայանապատ գործողություններին եւ այնպիսի կեղծ օրակարգին, ինչպիսին է՝ «Արցախը հանձնելով փրկում ենք Հայաստանը» թեզը, քանզի Հայաստանը եւ Արցախը անվտանգային առումով մեկ ամբողջականություն են եւ նրանցից յուրաքանչյուրին ուղղված հարվածը հավասարագոր է մյուսի թիրախավորմանը:

5. Արցախի ժողովրդի անվտանգության գլխավոր երաշխավոր է հանդիսանում Արցախի Պաշտպանության բանակը, ուստի անընդունելի է որեւէ գործողություն, որն ուղղված է ԱԶ ՊԲ-ի հիմքերի թուլացմանն ու կազմաքանդմանը: Արձանագրում ենք, որ այսօր Արցախում խաղաղությունը եւ ԱԶ ժողովրդի անվտանգությունն ապահովվում է ԱԶ ՊԲ-ի եւ Արցախում տեղակայված ռուս խաղաղապահ զորախմբի համատեղ ջանքերով:

6. Միջազգային հանրությանից պահանջում ենք տեղ կանգնել իր իսկ կողմից հռչակված համամարդկային արժեքներին եւ դատապարտել Ադրբեջանի հայասպան, հայերի նկատմամբ ատելություն սերմանող, ագրեսիվ պահվածքը, միջազգային տարբեր գործիքակազմերով, այդ թվում՝ պատժամիջոցների կիրառմամբ սանձել Ադրբեջանին:

7. Արցախի ինքնորոշման իրավունքի սկզբունքը պետք է վերադարձվի բանակցությունների սեղան, քանզի արցախահայության կյանքի, արժանապատվության, ազատության, իր ապագան ինքնուրույն տնօրինելու իրավունքները սակարկման ենթակա չեն:

8. Արցախը եղել է, կա ու մնալու է հայկական: Արցախը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում, եւ հանուն այս նպատակի մենք պատրաստ ենք պայքարի:

Դիմում ենք.

1. Հայաստանի Զանրապետության եւ Արցախի Զանրապետության բոլոր քաղաքական ուժերին՝ եղած հնարավորություններն ու ռեսուրսները համախմբել հանուն հայրենիքի պաշտպանության, որի առաջին քայլը պետք է լինի իշխող վարչախմբի հեռացումը:

2. Աշխարհասփյուռ հայությանը խնդրում եւ հորդորում ենք ներդնել իրենց բոլոր միջոցներն ու կարողությունները՝ աշխարհի բոլոր երկրներում բարձրացնելու ու առաջ մղելու հանուն արժանապատվության, ազատության եւ ինքնորոշման իրավունքի պայքարող Արցախի հայության արդար պահանջները:

3. ԱԶ իշխանություններին՝ առաջնորդվել ԱԶ Սահմանադրությամբ իր վրա դրված Արցախի ժողովրդի անվտանգության, ազատության եւ ինքնիշխանության պարտավորություններով, ինչպես նաեւ ԱԶ ԱԺ-ի կողմից ընդունված հայտարարություններով արձանագրված եւ Արցախի հանրության կողմից ընդունված կարմիր գծերով»:

Իրանն ի վիճակի է ստատուս քվոյի պահպանման առումով այլ առաքելություններ ստանձնել

2022թ. նոյեմբերի 8-ին Արցախ էր այցելել Իրանի խորհրդարանի նախկին պատգամավոր, Թեհրանի Ազատ համալսարանի դասախոս, պ.գ.թ. Կարեն Խանկարյանը, ում հետ «Ապառաժ»-ը զրուցել է տարածաշրջանում Իրանի դերի, հարեւան երկրների հետ հարաբերությունների մասին:

- Մեր տարածաշրջանում Իրանը նշանակալից դեր ունի, հատկապես պատերազմից հետո իր հայտարարություններով, զորավարություններով ոչ միայն հավասարակշռություն պահպանող գործոն է, այլ նաև աշխարհաքաղաքական հաշվարկներում վճռական խոսք ասող: Ինչքանով է հավանական պանթուրիստական նկրտումների դեմ Իրանի գործնական ներգրավվելը:

- Իրանի այդ զորավարությունները հիմնականում զսպողական նշանակություն ունեն. զսպում են ավելի մեծ պատերազմները եւ նոր ագրեսիաները, հատկապես՝ Հայաստանի դեմ: Ինչպես Իրանի հեղափոխության բարձրաստիճանի ղեկավարությունն է հայտարարել՝ սահմանային փոփոխությունները եւ ընդհանրապես աշխարհաքաղաքական փոփոխությունները Հարավային Կովկասում «կարմիր գիծ» է համարվում: Վերջին զորավարություններն ու հայտարարություններն են, «կարմիր գծով» ձեւավորված ռազմավարական խնդիրները, արժարժված դոկտրինաները զսպողական նշանակություն ունեն, թեեւ չի բացառվում, որ եթե հատկապես Թուրքիան փորձի ներկա ստատուս քվոյի առումով հավասարակշռությունը խախտել, Իրանը կարող է ավելի կոպիտ դերակատարություն ունենալ:

Այս բոլորը ցանկություն կամ բացահայտ տենդենց է ավելի մեծ դերակատարություն ստանձնելու առումով, որովհետեւ Իրանն ի վիճակի է խաղաղության գործընթացներ եւ ստատուս քվոյի պահպանման առումով այլ առաքելություններ ստանձնել: Օրինակ, չի բացառվում խաղաղապահ առաքելություն, մշտադիտարկման մեխանիզմների ձեւավորում եւ այլն: Ամեն դեպքում, այս ակտիվ քաղաքականությունը բավականին մեծ հնարավորություն է տալիս Հայաստանին եւ Արցախին, որպեսզի կարողանան ստեղծված անբարենպաստ վիճակը մի փոքր փոխել, նժարը թեթել դեպի ավելի հայանապաստ կացություն:

- Ռազմական բացահայտ առճակատման վտանգ տեսնո՞ւմ եք:

- Եթե չլինեին վերը հիշատակված հանգամանքները, ավելի մեծ կլինեին Թուրքիայի կոպիտ միջամտությունը Հարավային Կովկասի հարցերում, բայց հիմա նվազել է ռիսկը, որ Թուրքիան կփորձի ռազմական միջամտությամբ հարցերը լուծել կամ արագացնել կապիտուլյացիայի նոր պայմանագրի ստորագրումը:

- Վերջերս Իրանի Շիրազ քաղաքում տեղի ունեցած ահաբեկչական գործողության մեջ մեղադրվում է ադրբեջանցի ահաբեկիչը, ով Բաքվից է ժամանել Իրան: Այդ կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև Իրանի ԱԳՆ-ն: Ի՞նչ էք կարծում, այս իրողությունը կարո՞ղ է ազդել երկու երկրների հարաբերությունների վրա:

- Մոտ 30 տարի առաջ մի միտք էր շրջանառության մեջ դրվել, որ Իրանը փորձում է Ադրբեջանի հետ ունենալ քաղաքական շատ ընդարձակ, մեծ մակե-

րեսով, բայց փոքր խորությամբ հարաբերություններ, իսկ Հայաստանի հետ խորքային, բայց փոքր մակերեսով հարաբերություններ: Դրա ինչ-որ դրսեւորումը կամ նոր ձեւակերպումը վերջին ժամանակներում է ի հայտ եկել: Այս մոտեցումը պետական պաշտոնական դիրքորոշումների մեջ չէ: Ավելի շուտ վերլուծաբանների մոտ է ի հայտ գալիս այն մոտեցումը, որ Իրանը պետք է ձգտի՝ ընդլայնելով հանդերձ իր փոխհարաբերությունները Ադրբեջանի հետ, միեւնույն ժամանակ ձեւավորել ռազմավարական գործընկերություն Հայաստանի հետ: Զաղաքական փոխհարաբերությունների խորացման երեւույթը եւ ռազմավարական դաշնակցության կամ գործընկերության դրվածքը տեսակով տարբեր են, եւությամբ տարբեր մակարդակներ են զբաղեցնում:

Ինչ խոսք, Իրանի եւ Ադրբեջանի միջեւ այդ լարվածությունը կա, մանավանդ Ադրբեջանը նախկինում էլ է նման հակաիրանական ահաբեկչական գործողություններ ղեկավարել կամ կազմակերպել Բաքվից՝ Իսրայելի օգնությամբ ու նույնիսկ Իսրայելի դերակատարությամբ: Օրինակ, մի քանի տարի առաջ Իրանի հարստացման գծով 6 գիտնականներ ահաբեկվեցին Իրանում: Այդ գործողությունն իրականացրեց Իսրայելը, «Մոսադը», իսկ ղեկավարվում էր հենց Ադրբեջանի տարածքից: Այդ ժամանակ էլ լարվածությունը բարձրացավ: Ադրբեջանի տարածքն Իսրայելի կողմից արդեն բացահայտ կերպով օգտագործվում է որպես հակաիրանական լրտեսական կամ ուղղակի ահաբեկչական միջավայր:

- Լրատվամիջոցներից տեղեկանում ենք, որ Իրանը որպես միջնորդ է ցանկացել հանդես գալ Հայաստանի եւ Ադրբեջանի միջև, սակայն Ալիեւը մերժել է միջնորդության առաջարկը: Ինչքանով էք հավանական համարում Իրանի միջնորդական առաքելությունը: Արդյո՞ք դրա հետ կապ ունի Նիկոլ Փաշինյանի վերջին այցը Իրան:

- Միշտ էլ եղել է միջնորդական դեր ստանձնելու պատրաստակամությունը: Բայց, մանավանդ Փաշինյանի վերջին այցելությունը կապված է Սոչիի եռակողմ բանակցությունների արդյունքների հետ: Թեեւ բացահայտ տեղեկություններ չունենք, բայց կարելի է ենթադրել, որ Իրանը ընդգծած պետք է լինի այսպես կոչված «վաշինգտոնյան» առաջարկության մերժումը եւ «մոսկովյան» առաջարկության կիրառումը: Կարծում եմ՝ Իրանը փորձում է Հայաստանին մղել դեպի «մոսկովյան» առաջարկություն: Իրանի նախագահ Իբրահիմ Ռախիսի հստակ հայտարարել է, որ արտաքին միջամտությունները կարող են վատ հետեւանքներ ունենալ եւ տարածաշրջանը կանգնեցնել նոր մարտահրավերների դեմ հանդիման: Այս խոսքը ինքնին նշանակում է Իրանի առնվազն հակառակությունը «վաշինգտոնյան» առաջարկությանը: Մանա-

վանդ Ն. Փաշինյանի այցը տեղի ունեցավ չժողոված կերպով՝ Սոչիի եռակողմ հանդիպումից հետո: Սակայն դեռեւս պետք է չբացահայտված կողմերը հայտնի դառնան, որպեսզի կարողանանք ավելի ճիշտ կողմնորոշվել:

- Մոտ երկու ամիս է՝ Իրանում տեղի են ունենում զանգվածային անկարգություններ, բողոքի ակցիաներ: Արդյո՞ք դրանք կարող են հանգեցնել իշխանափոխության եւ ազդել Իրանի քաղաքական դիրքորոշման փոփոխության վրա:

- Հի բացառվում, բայց շատ քիչ հավանական է: Ե՛ւ 2009թ., ե՛ւ 2017թ., ե՛ւ 2019թ. նմանատիպ քաղաքացիական անհնազանդության կամ բողոքի ցույցեր են տեղի ունեցել, եւ փորձը ցույց է տալիս, որ միշտ, նույնիսկ արդար բողոքի ակցիաների ալիքի վրա, բարձրաՆում են սուր հակապետական, ահաբեկչական, անջատողական շարժումներ: Այս անգամ ավելի ընդգծված էր այս երեւույթը: Շատերի կարծիքով՝ միջադեպի հետ կապված արդար բողոք էր, բայց դրանք բնույթը լրիվությամբ փոխ-



վեց հենց այդ անջատողական շարժումների եւ սուր հակապետական ահաբեկչական կազմակերպությունների առկայության պայմաններում: Ցույցերը, բողոքի ակցիաները փոխվեցին եւ վերածվեցին իշխանության փոփոխության խնդրի: Իհարկե, դրան համապատասխան Իրանը փորձում է հակաքայլերի դիմել, այդ շարժումները աստիճանաբար մարում են, հետեւաբար իշխանափոխության հավանականությունը քիչ է:

Ցույցերի միջոցով մի շարք արեւմտյան պետություններ փորձում են նոր գիշումներ կորզել Իրանից, նոր առավելություններ ձեռք բերել բանակցությունների սեղանի շուրջ: Բայց չեմ կարծում, թե այս շարժումները կարող են ազդել արտաքին քաղաքականության ռազմավարական առանցքի վրա:

- Բացի ներքին անկարգություններից եւ ներքին քաղաքական ասպարեզում տիրող իրավիճակից, Իրանը նաև դեմ հանդիման է կանգնած միջազգային հնչեղություն ունեցող ռուսիկ հարստացման հարցով առաջացած խնդիրներին: Տարիներ շարունակ բանակցություններ են ընթանում եւ Իրանը ենթարկվում է սահմանափակումների: Այս առումով ինչ-որ փոփոխություն կանխատեսո՞ւմ եք:

- Համընդհանուր ծրագրի փաթեթը «5+1» բանակցությունների առանցքն էին կազմում: Դրանք 2017թ. ի վեր

փակվեցին ԱՄՆ-ի կողմից: Հիմա դրա վերաբացման կամ այդ օրակարգին անդրադառնալու որոշ նախանշաններ է ցույց տալիս ԱՄՆ-ն: Պատժամիջոցներն այդ բանակցությունների հետ են կապված, եւ կարծում եմ, որ այդ բանակցությունները ուշ թե շուտ տեղի են ունենալու: Հարցը կախված է մի շարք երաշխիքներից, որոնք Իրանը պահանջում է ԱՄՆ-ից: Իշխանափոխության պայմաններում անընդհատ վայրկյաններով եւ ենթարկվում բանակցությունների հարցում ԱՄՆ քաղաքականությունը: Իրանը երաշխիքներ է փորձում կորզել ԱՄՆ-ից, որ իշխանափոխության դեպքում ընթացքը չփոխվի: ԱՄՆ-ն էլ չգիտեմ ինչքանով է ի վիճակի այդ երաշխիքները տալ: Նրանց պետական ընթացակարգը նկատի ունենալով՝ կարող է մեծ փոփոխությունների ենթարկվել արտաքին քաղաքականությունը, բայց հիմա այդ բանակցությունները վերսկսելու հարմար պայմաններ կան, մնում է երկուստեք քաղաքական կամք դրսեւորեն: Արդեն որոշ պատժամիջոցներ հանվել են, բայց հնարավոր է ավելի պակասեն, եւ հարցի եթե ոչ վերջնական, գոնե մասնակի լուծումն ապահովվի:

- ՀՀ անկախության օրվանից, ինչու չէ՛ նաև Արցախի հարցի կապակցությամբ Իրանը միշտ հիշատակվում է իր հավասարակշռված եւ ինչ-որ տեղ հայամետ դիրքորոշումներով: Սակայն առերևույթ կերպով այս մոտեցումները որեւէ դրսեւորում չեն ունենում: Ձեր տեսակետը՝ հնարավոր է ավելի սերտ հարաբերություններ հաստատել:

- Կարծում եմ՝ 44-օրյա պատերազմից հետո, առկա պայմանների համեմատ, այսօր դրականորեն փոխվել է Իրանի դիրքը: 44-օրյա պատերազմի ժամանակ Իրանը պասիվ դիրք է ունեցել, հատկապես հենց այն ագրեսիայի նկատմամբ, որն այսօր էլ շարունակում է Ադրբեջանը: Իրանի դրսեւորած պահվածքը նաև առիթ է դարձել, որ այս իրավիճակը ստեղծվի տարածաշրջանում:

Իրանում նախագահ է փոխվել. Ռոհանիի կառավարությանը փոխարինել է Ռախիսիի կառավարությունը: Այս փոփոխությունն արտաքին քաղաքականության մեջ վերանայումների է հանգեցրել, եւ հայտարարված «կարմիր գծերով» ձեւավորված ռազմավարությունը հենց այդ մոտեցումների փոփոխության հետեւանքն է: Սա լուրջ փոփոխություն է՝ նկատի ունենալով Իրանի քաղաքական վիճակը, քաղաքական դաշտը եւ այն բոլոր մեխանիզմները, որոնք այնտեղ աշխատում են արտաքին քաղաքականության համատեքստում:

- Արդյո՞ք Հայաստանի կողմից համապատասխան քայլեր ձեռնարկվում են:

- Կարծում եմ՝ ՀՀ-ն այս հարցում պասիվ մոտեցում է ցուցաբերում, որն իր պատճառներն ունի: Պատճառների մի մասը, որոնք կապված են արեւմուտքի հետ փոխհարաբերությունների համատեքստին, հասկանալի են, իսկ մի մասն էլ՝ անհասկանալի: Իրանը բավականին սկզբունքային, ակտիվ ու նախաձեռնող է այս հարցում: Կապակցի հյուպատոսարանի բացումը շատ հստակ քայլ էր: Թեեւ տարիներ ի վեր Իրանը ձգտում է այդ հյուպատոսարանը հիմնել, բայց այս օրերին, առկա պայմաններում այդ քայլին դիմելը հենց խոսում է արտաքին քաղաքականության մեջ վերանայումների մասին:

Զրուցեց Տաթևիկ ԱՂԱՉԱՆՅԱՆԸ

Ուզում եմ Արցախը գունավոր ներկայացնել, մյուսներն էլ թող այդպես հիշեն

Արցախը ճանաչելն առաջին հերթին արցախցիներին է պետք: Շատերը կարծում են, թե Ղարաբաղը Ստեփանակերտն է, եւս հինգ-վեց բնակավայր, մի քանի եկեղեցի ու վերջ: «Ապառաժ»-ի հետ զրույցում ասում է լուսանկարիչ Սեւակ Ասրյանը: Արցախի օկուպացված տարածքներում արված նրա լուսանկարները ցուցադրվել են 44-օրյա պատերազմի երկրորդ տարեկիցին նվիրված «Հիշողության ուժը» ցուցահանդեսին:

Իր գործունեության ընթացքում ցուցահանդես կազմակերպելու շատ առաջարկներ է ստացել Սեւակը, բայց չի սիրում, որ շեշտը դնում են վաճառքի, երեւանում կամ այլ վայրերում ցուցա-

նկարել, բայց ընտանեկան տարբեր առիթներին: Ես էլ սկսեցի հետաքրքրվել, եւ հայրս նրբությունները բացատրեց: Ֆոտոպատարող հետս տանում էի դպրոց, ընկերներին նկարում, ընտանիքս էի նկարում, մեկ-մեկ էլ՝ բնության տեսարաններ, կենդանիներ»,- պատմում է Սեւակը:

Հետո սկսվեց Արցախյան շարժումը, պատերազմը: 17 տարեկանում կամավորագրվեց պաշտպանության ուժերի շարքերին. հակաօդային պաշտպանությունում էր ծառայում: Հետո պատերազմ տարավ նաեւ լուսանկարչական ապարատը. «Անընդհատ նկարում էի, բայց չէի տպում: Այնպես ստացվեց, որ այդ ժապավեններից ոչ մեկը չունեմ: Այն ժամանակ մի քիչ միամիտ էի. տալիս էի մարդկանց, որ իրենց նկարները հանեն, ու մնում էր իրենց մոտ: Վերջերս տղաներից մեկն ասաց, որ ժապավեններից մեկն իր մոտ է»: Հիմա էլ առաջին պատերազմի նկարներ տեսելիս՝ մեկ-մեկ կասկածում եմ, որ հնարավոր է իր արած լուսանկարները լինեն: Դրանից հետո երկար տարիներ չի զբաղվել սիրած գործով: Ասում է՝ «ուրիշ



խնդիրներ, ուրիշ ծառայություն»:

հանդես կազմակերպելու վրա: «Դա չի նշանակում, թե դեմ եմ վաճառքին: Բոլորն էլ գիտեն, որ եթե իմ նկարները վաճառում եմ, ապա թանկ եմ վաճառում: Արցախի անվան տակ նկարներ եմ դնում, ու մի քիչ դավաճանություն կլինի, որ առաջին ցուցահանդեսն անեի ուրիշ տեղ: Արդեն որոշել էի ցուցահանդեսին ինքս իմ ուժերով անել: Հետո Հակոբավանքի վերականգնման նախագծով սկսեցի համագործակցել «ՌեԱրմենիա» հարթակի հետ, որտեղ էլ առաջարկեցին կազմակերպել ցուցահանդես: Սկսեցի մտածել ձեռագրի մասին: Կամաց-կամաց հավաքեցի արված լուսանկարները, մտածեցի խորագրի մասին. սկզբում «Կորսված հույս» էի ուզում անվանել, բայց ընկերներիցս մեկը համոզեց, որ ուրիշ բան մտածեք: «Հիշողության ուժը դուրսերը եկավ», - նշում է նա:

Պետք է ընտրվեր 44 նկար: Տարիներ շարունակ Արցախի տարբեր վայրերը լուսանկարչական օբյեկտիվում անմահացրած Սեւակը մեծ արխիվ ունի, եւ այդ պատճառով շատ դժվար էր ընտրություն կատարելը. «Սկզբից մոտ 500 նկար եմ ընտրել, հետո՝ 200, այնուհետեւ՝ 120, դրանից հետո տվել եմ կազմակերպիչներին՝ ասելով՝ այլեւս չեմ կարողանում, դո՛ւք ընտրեք»:

«Իմ նկարներում, ցուցահանդեսում մարդ, արյուն, պատերազմ չէր տեսնելու: Ես ուզում եմ Արցախը գունավոր ներկայացնել, մյուսներն էլ թող այդպես հիշեն: Մեր կորցրած տարածքները սեւ չպիտի հիշվեն. ասում եմ, երբ Ղարաբաղը սեւ-սպիտակ եմ տեսնում: Ուրախ կլինեմ, որ անծանոթ մարդը, տեսնելով այս լուսանկարները, ցանկանա լինել այդ վայրերում: Մարդ կարող է տխրել, հուզվել, հիասթափվել լուսանկարները դիտելով, բայց դրանք լուսավոր պետք է լինեն», - ասում է Սեւակը:

Լուսանկարելու սերը նա հորից է ժառանգել, սակայն լուսանկարչությունը նա ոչ թե մասնագիտություն է համարում, այլ հոգու ցանկություն:

«Առաջին ուսուցիչս հայրս էր: Նա խորհրդային «Земля-Е» (Զեմլիոյ Ե) ֆոտոպատարատ ուներ: Ինքն էլ էր սիրում

խնդիրներ, ուրիշ ծառայություն»:

2012թ., ծառայությունից դուրս գալուց հետո Ուկրաինայի Օդեսա քաղաքն է այցելել: «Ամառային շրջանն էր: Ողջ օրը պարապ էի, Օդեսայով էի շրջում, ու որոշեցի մի ֆոտոսիցիլ վերցնել: Սկսեցի նկարել, սովորել, ինչ-որ կայքերում դնել նկարածներս, բայց բարկանում էի, որ շատ լայքեր հավաքում նկարներս կամ քննադատական խոսքեր էին մարդիկ գրում: Որոշեցի մի քիչ խորանալ: Տարբեր տեսահոլովակներ նայելով՝ կամաց-կամաց սկսեցի սովորել, ու միևնույն հիմա ամեն օր նոր բան եմ սովորում: Սովորեցի ու, չգիտեմ ինչպես, բայց ստացվեց», - ասում է նա: Սակայն միևնույն հիմա իրեն լուսանկարիչ չի համարում:

«Լեռնային» մականունն էլ կապված է երիտասարդական դաշտում իր գործունեության հետ: 1996թ. հիմնադրեց Արցախում առաջին հասարակական կազմակերպությունը՝ «Արցախի երիտասարդների միություն»-ը:

«Այն ժամանակ համագործակցում էի երեւանյան որոշ ՀԿ-ների, այդ թվում՝ հայ-շվեդացիական «Առազաստ» կոչվող ակումբի հետ: Երեւանում այդ ակումբում միշտ ասում էին «նագործի բրատը եկավ»: Ու այդպես՝ մականունս մնաց «նագործի բրատ»: Սկզբում նկարներս, գրածներս չէի դնում, բարդությամբ վաճառեցի էի այդ հարցերում, եւ «Սերգեյ Նագործի» անուն-ազգանունով էի ներկայանում: Ֆեյսբուքում էլ երկար ժամանակ այդ անունով էի: Մի անգամ տեսա, որ այդ անուն-ազգանունով շատ մարդիկ կան, որից հետո «նագործին» փոխեցի «լեռնայինի», այդպես էլ մնաց մականունս: Ինձ համար էլ է այդ անունը հաճելի ու կապված է Լեռնային Ղարաբաղի հետ», - պատմում է Սեւակը:

Մարդկանց չի սիրում նկարել, կամ՝ թեթ լուսանկարում է, ապա որպես բնություն մասնիկ: Արցախի բոլոր ծայրերում եղել է, բայց մի քանի կետ առանձնահատուկ է սիրում. այնտեղ հանգստանում էր, կտրվում առօրյայից: Դրանցից է Վանքասարը, որ մնացել է աղբեջանական կողմում: Մյուս նախընտրած վայրերը՝ Հակոբավանքը եւ Մեյրիանը, այժմ էլ պարբերաբար այցելում է:

«Մեյրիանի ճանապարհը բարեկարգել են, բայց ես ուրախ չեմ դրա համար, որովհետեւ այցելուներն այդ տեղը աղբանոցի են վերածել, ուսկը՝ Այգեստանի ջրվեժի դեպքում: Շատ սիրում վայրերի տեղ գիտեմ, որոնց մասին չեմ պատմում, որովհետեւ գիտեմ՝ մարդիկ անտառը կտրելու են, ճանապարհ բացեն, վերջում տեսնեք շէր, պլաստիկ տոպրակներ: Միևնույն դա չփոխեց մեր մեջ, միևնույն չհասկանանք, որ ճանապարհին չպիտի աղբ չպարտենք, ոչինչ չի փոխվի», - կարծում է Սեւակը:

Սեւակը ցուցադրում է Վանքասարի լուսանկարները, որոնք արել է տարբեր եղանակային պայմաններում, հետո հատուկ ռակուրսից արված Կանաչ ժամը. «Կանաչում չէի մտածի, որ Կանաչ ժամի այս լուսանկարը այսքան թանկ կլինի՝ ոչ նյութական առումով: Կավաքավանքի այս նկարն էլ ոչ ոք չի նկարելու, որովհետեւ վերջին պատերազմի ժամանակ կիսավեր շենքը լրիվությամբ քանդվել է: Լուսանկարն արվել է օգոստոսի վերջին»:

«Բնությունն ամեն վայրկյան փոխվում է: Շատ դեպքեր են եղել, որ պատրաստվում էինք մի քանի օրով գնալ որեւէ տեղ, հասնում էինք գագաթին, մառախուղ էր պատում, կամ անձրեւ էր սկսվում: Օրինակ՝ մեծ դժվարությամբ բարձրացել եմ Կատարո, գիշերն անքուն մնացել, անընդհատ արթնացել ու ստուգել՝ արդյո՞ք երկինքը բացվել է: Արդյունքում ընդամենը մի կադր եմ արել: Այդ պատճառով յուրաքանչյուր նկար ինձ համար թանկարժեք է», - ասում է նա:

Նրա խոսքով՝ վատ բնավորություն ունենք: Մեզ թվում է, թե միայն մենք ունենք այսպիսի բնություն. «Փոքրիկ Շվեյցարիա» ենք անվանում Արցախը: Շահեն Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» գրքում 1000-ից ավելի կոթողներ կան նշված. շատ մարդիկ 4-5-ը գիտեն, կամ՝ ամեն մեկը իր գյուղի եկեղեցուն մասին: Այս փաստից վատ է զգում: Մենք այնքան ենք մեզ թերագնահատում, որ հազարավոր տարվա եկեղեցիները թողած՝ այստեղ-այնտեղ խաչ ենք տնկում: 4-րդ դարի եկեղեցիների կողքին երկաթի կտոր ենք դնում ու ասում՝ մենք քրիստոնյա ենք:

Ի տարբերություն առաջին պատերազմի՝ 44-օրյա ժամանակ քիչ է նկարել. հիմնականում իր մեքենայով լրագրողների էր տեղափոխում կամ ինչ-որ ապրանքներ տեղ հասցնում: «Մարտունի քաղաքում հոկտեմբերի մեկի դեպքերի ժամանակ եմ նկարներ արել, երբ լրագրողների խմբի վրա հարվածեցին: Ռմբակոծված քաղաքն էլ եմ նկարել, բայց դրանք ոչ մեկին ցույց չեմ տալիս, որովհետեւ ինձ համար ծանր հիշողություն է: Ավելի շատ աշխատել եմ որոշ լուսանկարիչների հետ, հետեւել նրանց աշխատանքներին», - հիշում է Սեւակը:

Բնավորությամբ անհանգիստ, անընդհատ պրպտող Սեւակը ծանոթների բնութագրմամբ՝ անհույս լավատես է. «Մարդիկ հիմա խոսում են ամեն ինչ կորցնելու մասին: Ասում եմ՝ մենք 70 տարի Ադրբեջանի կազմում ամեն ինչ կորցրած էինք: Եկեղեցիներն ավերում էին, օգտագործում որպես դժխար պահելու տեղ, կամ՝ քարերը քանդում՝ ճա-

նապարհ էին սարքում: 70 տարի հետո որոշել ենք միասալ ՀՀ-ին, փորձել ենք անկախանալ ու 30 տարի օգտվել ենք՝ մեկը ֆինանսական, մյուսը հոգեկան առումով: Անկախ հանրապետությունում ծնված եւ մեծացածների համար երեւի ավելի դժվար է, քան թե ինձ համար, որովհետեւ ես խորհրդային ժամանակներում էլ եմ ապրել: Այն ժամանակ երիտասարդ էինք, ու կյանք, առողջություն ենք տվել, որ այս պահին հասնենք: Եվ միանգամից այսպիսի վիճակ: Իհարկե, ավելի հեշտ է նստել եւ սուգ անել»:


Պատերազմից հետո Սեւակ Ասրյանին ոգեշնչում են մարդիկ: «Արցախի ամենամեծ հարստությունը ժողովուրդն է: Ինձ հարազատ մարդկանց մեծամասնությունն այստեղ է ապրում: Հինգ տարեկան երեխային դրսում տեսնելով՝ մտածում եմ, որ հենց նրա համար պիտի այստեղ մնամ: Այնքան ընկերներ ունեմ, որ վերջին երկու տարվա ընթացքում երեխաներ են ունեցել: Հայրենիքը հնարավոր չէ հեռվից սիրել: Հայերս էլ սիրում ենք հասնել Կրասնոդար, Երեւան ու գրել՝ «վայ Արցախս, հայրենիքս»: Մարդիկ հիմա շատ են քննարկում Ռուբեն Վարդանյանին: Ինձ համար Եսկան չէ՝ ինքն ով է, ինչի համար է այստեղ եկել, բայց փաստն այն է, որ քաղաքով քայլելիս ես նրան կարող եմ հանդիպել, իսկ հայրենասիրություն քարոզող շատերին՝ ոչ: Շատ բան կա ինձ այստեղ պահող: Բայց, ցավոք, չեմ կարող ասել, թե այստեղ ավելի լավ է, քան այլ տեղ: Պատրաստ եմ ամեն տեղ գնալ, բայց մի տասը օր մնալ, հետո վերադառնալ: Այստեղ իմ ընկերությունն է, իմ շրջապատը: Ես բոլորի հետ էլ հեշտ եմ լեզու գտնում. սա է իմը»:

Ըստ նրա՝ պատերազմը հիմա էլ շարունակվում է, ուղղակի՝ այլ մակարդակով: «Ընկերոջս զոհվելուց հետո՝ նոյեմբերի 10-ին, ստատուս եմ գրել, որ պատերազմը դեռ շարունակվում է: Այս ցեղք կարգավիճակը ոչ մեկին դուր չի գալիս. կամ՝ այսպես կկտրվի, կամ՝ այնպես: Ես հույս ունեմ, որ մեր օգտին է լինելու, որովհետեւ դա պատմականորեն



արդար է: Զգիտեմ ինչու՝ այդպես եմ մտածում: Թուրքերն էլ են շատ լավ հասկանում, որ պատերազմը չի ավարտվել: Շուշիում միևնույն հիմա մարդ չի ապրում: Որոշ ժամանակ առաջ մի նկար էր տարածվել, որտեղ հայ զինվորը հայկական դրոշի տակ վերելից Շուշիին է նայում: Ադրբեջանցիները խենթացել էին, ասում էին՝ բա ասում եք Շուշին անվտանգ է: Այդ նկարը հայաստանյան մեդիայում այնքան չի տարածվել, ինչքան արբեջանականում: Ես հույս ունեմ, որ սա վերջը չէ: Զգիտեմ ինչու՝ հուսով եմ, որ լավ է լինելու», - ասում է Սեւակը ու թերթում Արցախի աստղաշատ երկնքի պատկերներով լուսանկարչական ալբոմը:

Եթե մենք ուզում ենք ապրել այս հողում, պետք է պայքարենք. Գ. Սարգսյան



մասնակցությունն են բերել առաջնագծի պաշտպանությանը: Ունեցել ենք 3 գոհ: Մեկ հոգի արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, մյուսը՝ 2-րդ աստիճանի շքանշանի:

Մենք մի վարկած ունենք, որ մեր պարտությունը ոչ այնքան թույլ դիմադրության պատճառով էր, այլ այնպիսի ներքին ուժերի, ովքեր խառնեցին ամեն ինչ եւ մեզ հասցրին պարտության: Մեր զինվորը չի պարտվել, քանի որ իրենք հայրենասիրական ոգով տոգորված իրենց կռիվը տարել են մինչև վերջ՝ իրենց արյան գնով, իրենց կյանքը վտանգելով»,- նշել է Գ. Սարգսյանը:

Համայնքի ղեկավարի խոսքով՝ Լուսինիսկ այն պահին, երբ վտանգված էր Մարտունին, ոչ ոք չի լքել գյուղը:

«Չինադադար չենք կարող ասել, որովհետեւ ամեն օր կրակոցներ լինում են, բայց հրադադարից առ այսօր համայնքից ոչ ոք չի հեռացել, տեղահանվածները վերադարձել են եւ Լուսինիսկ այս անորոշ պայմաններում շենացնում են իրենց օջախները: Այդպիսին է հայր՝ միշտ արարող, կառուցող»,- ասել է Գ. Սարգսյանը:

Նրա խոսքով՝ գյուղացիներն զբաղված են իրենց առօրյա աշխատանքներով: Իսկ մեզ մնում է միայն պայքարել եւ մինչեւ վերջին շունչը հայրենի հողում կռիվ տալ, պաշտպանել հայրենի հողը, թեկուզ պարտվել, բայց պարտվել պատվով, ոչ թե վիզը մեկնել յաթաղանի առջեւ:

Պատերազմի ընթացքում Կաղարծին գնդակոծվել է մոտ 150 անգամ, որի արդյունքում վնասվել է 14 տուն:

«4 տուն վերանորոգվել է, մյուսներն ընթացքի մեջ են: Գյուղում վերանորոգվել եւ որպես բազմաբնակարան շենք շահագործման է հանձնվել 80-ականներին դպրոցի համար նախատեսված շենքը, որի շինարարական աշխատանքները դադարեցվել էին Արցախյան շարժման ժամանակ: Շենքի կառուցումը նախատեսված էր մինչեւ պատերազմը, որի բնակարանները պետք է հատկացվեին գյուղի երիտասարդ ընտանիքներին: Պատերազմի ավարտից անմիջապես հետո սկսվեցին շինարարական աշխատանքները, սակայն արդեն նախատեսված էր ոչ միայն երիտասարդների, այլեւ տեղահանված ընտանիքների համար»,- նշել է համայնքի ղեկավարը:

Համայնքի ղեկավարի խոսքով՝ թեեւ 2021-ին սկսվել է ավարտին են հասցվել գյուղի հիմնական ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները, սակայն գյուղի խնդիրների մեջ շարունակում է առաջնային մնալ ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը, քանի որ կան ճանապարհներ, որոնք անանցանելի են մեքենաների համար եւ խնդիրներ են առաջացնում՝ անասնակերի եւ փայտի մթերման հետ կապված:

Գ. Սարգսյանը գյուղի խնդիրների մեջ առանձնացրեց նաեւ միջոցառումների տան վերանորոգման եւ մարզադահլիճի կառուցման անհրաժեշտությունը, որի պակասը շատ է զգացվում, սակայն ելնելով երկրում ստեղծված իրավիճակից, այն հրատապ չհամարեց: Գյուղում գործում է բուժկետ, դպրոց, որի շենքը հին, սակայն բարեկարգ վիճակում է:

Պատերազմից հետո Կաղարծին հաստատվել է բռնի տեղահանված 10 ընտանիք եւ եւս 4-ը՝ այլ շրջաններից:

Գարուշ Սարգսյանը ելք ստեղծված իրավիճակից պատկերացնում է ժողովրդի համախմբվածությամբ ու հողին կառչած մնալու մեծ ցանկությամբ: Նա կարելու է նաեւ հայրենադարձության անհրաժեշտությունը:

Մարտունու շրջանի ոչ այնքան մեծ, նախալեռնային Կաղարծի գյուղի բնակիչները շարունակում են ապրել Ստեփանակերտ-Նևգի- Մարտունի միջշրջանային ճանապարհահատվածի հարեւանությամբ: Պատերազմից հետո, ինչպես Արցախի բոլոր գյուղերում, խնդիրներն ու հոգսերը շատացել են, սակայն արցախցու տեսակն այնպիսին է, որ շարունակում է նորից շենացնել իր հողը, վերականգնել քանդվածն ու ապրել պայծառ գալիքի հույսով:

Կաղարծի համայնքի ղեկավար Գարուշ Սարգսյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է, որ 44-օրյա պատերազմն անսպասելի էր գյուղացիների համար: Թեեւ ներքուստ բոլորն էլ զգում էին պատերազմի վտանգը եւ համոզված էին, որ այն մի օր լինելու է, սակայն էին սպասում այս մասշտաբի պատերազմի:

«Նախքան պատերազմը մարդիկ ապրում էին խաղաղ, զբաղվում հողագործությամբ ու անասնապահությամբ, իրենց առօրյա հոգսերով: Բոլորն ապրում էին բարեկեցիկ կյանքով, եւ կարծես թե առաջին պատերազմի հետեւանքները կարողացել էին հաղթահարել ու հունի մեջ ընկել, բայց չարաբաստիկ պատերազմը մարդկանց հույսերն ու երազանքները կիսատ թողեց»,- ասել է Գ. Սարգսյանը:

Գ. Սարգսյանի խոսքով՝ Արցախի ժողովուրդն իր ողջ ներուժը կենտրոնացրել էր պատերազմին դիմակայելու համար:

«Ամեն մի երիտասարդ, ամեն մի զինվորական իր նվիրական գործով փորձում էր կանխել թշնամու առաջխաղացումը, սակայն, ցավոք սրտի, մենք կրեցինք դաժան պարտություն:

Պատերազմի ընթացքում գյուղի տղաներն իրենց




«Եթե այս պահին մենք ունենանք 500 հազար բնակիչ, ապա ալիեյան հորջորջանքները կպակասեն: Մենք միայն մեր սրով ու վահանով պետք է պաշտպանենք մեր հողը, ուրիշների վրա հույս դնել պետք չէ: Ո՞վ պետք է զա մեզ պաշտպանի, եթե մենք չենք պաշտպանում ինքներս մեզ: Եթե մենք ուզում ենք ապրել այս հողում, պետք է պայքարենք, առանց պայքարի ապագա չունենք»,-ասել է Գ. Սարգսյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թատրոնը պետք է ստիպի բացել աչքերը

Ստեփանակերտի Վահրամ Փափագյանի անվան պետական դրամատիկական թատրոնը 90-րդ թատերաշրջանը սկսել է նոր ներկայացմամբ: Պատերազմից հետո Երեւանից Արցախ ժամանած ռեժիսոր Վահան Խաչատրյանի բեմադրության հիմքում սցենարիստ, բեմադրիչ Էդուարդ Չորիկյանի «Անմահների երկիրը» պիեսն է, որը պատմում է, թե ինչպես են մեր կողքին պարող տղաներից շատերը հայրենիքն ու հայ ժողովրդի լինելիությունը պաշտպանելը բարձր դասել իրենց կյանքից: Ներկայացումը պատմում է երիտասարդ լրագրողի մասին, ով առաջնագիծ էր հասել ռեպորտաժ պատրաստելու, բայց սկսվում է պատերազմը, եւ այնտեղ անցկացրած մի քանի ժամվա ընթացքում Անահիտը հասկանում է, թե ինչ գնով է պահվում մեր անկողնը:



Ներկայացման առաջնախաղը կայացել է Երեւանի 4-ին, հաջորդող օրերի ցուցադրությունները շարունակվում են: Ներկայացումը բեմադրող ռեժիսոր Վահան Խաչատրյանի երրորդ աշխատանքն է Արցախյան բեմում: Նա բեմադրությանը չի նայում որպես սովորական գործի, այլ համարում է հոգու պարտք, խղճի առջեւ հաշվետվություն, քավարան, որտեղ արտահայտված է փափագյանցիների սերն ու նվիրումը:

«Բեմադրությանը ծանոթ էի 2017-ից, ուղղակի ժամանակը պարտադրեց, որ այսօր այդ գործը նորովի մատուցվի: Էդուարդ Չորիկյանի «Անմահների երկիրը» պիեսը ձեւափոխել ենք եւ դարձրել «Անմահների դիրքը»: Ժամանակակից թատրոնում պետք է արտացոլվեն ժամանակակից հեղինակի մտածելակերպը, ժամանակակից խնդիրները: Այսօր թատրոնը շատ է կտրվել կոնտեքստից. թատրոնը իրականության հայելին է,

ծուր է ներկայացմամբ մարդկանց բերել իրական գիտակցության. «Մարդու հիշողությունն է նրան կենդանուց տարանջատում: Ես կցանկանայի, որ այս ներկայացման կարիքը չլիներ, բայց տեսնում եմ, որ կարիքը կա, որովհետեւ մարդը սկսել է կենդանուց չտարբերվել, ու ամեն ինչ մոռացության տալով՝ հիմարությամբ է փորձում զբաղվել: Մենք չենք ուզում նայել իրականությանը, հայելու մեջ: Մեծ մասը չի էլ գիտակցում՝ ինչ է կատար-

վում: Մենք չենք գիտակցում, թե ինչ տարածաշրջանում ենք ապրում, տեղ-տեղ քթներս ցցել էինք: Մենք չգիտեինք, որ աչից-ձախից թուրքն է. փակ աչքերով ապրելը ձեռնտու էր: Սա առաջին հերթին իմ բողոքն է հասարակության դեմ, սա ներկայացում չէ պատերազմի մասին: Սա պատերազմի հուշից բացի, նաեւ իմ հասարակության սխալների մասին է»:

Վահան Խաչատրյանը համոզված է՝ երբ երկնքում տղաների հետ հանդիպի, գլուխը կախ չի լինելու, կարողանալու է հանգիստ խղճով նայել նրանց աչքերի մեջ:

Թատրոնի արվեստագետ Կարինե Ալավերդյանի խոսքով՝ թատրոնն իր ժողովրդի հետ 4 պատերազմ է անցել, եւ այդ պատերազմներն իրենց արձագանքն են գտել նաեւ նրանց ստեղծագործական աշխատանքում: Արցախյան երեք պատերազմների թեմաներով բեմադրվել են «Արցախյան բալլադ», «Պա՛պ, կրակում են», «Մենք մեր սարերն ենք», «Ես մնում եմ», «Լուսաբացից առաջ» ու բազում բեմադրություններ, որոնք սիրվել են հանդիսատեսի կողմից, որովհետեւ իր մասին են, իր ապրած օրերի մասին են: Անմահների դիրքը եւս այս շարքից է:

Տարեիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

ՀՀ ԱԵՄ-ը Արման Ստեփանյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառում է կազմակերպել

Նոյեմբերի 6-ին ՀՀ Արցախի երիտասարդական միության «Դուշման» խմբի նախաձեռնությամբ ՀՀ ԱԵՄ-ի «Արտակառուցական» երիտասարդական կենտրոնում կազմակերպվել է միջոցառում՝ Արման Ստեփանյանի ծննդյան 41-ամյակի առթիվ: Նախաձեռնությունը նպատակ ունի ՀՀ ԱԵՄ-ի շարքերին ծանոթացնել նահատակ ընկերոջ՝ Արման Ստեփանյանի անհատականությանը, ով հավատարիմ ընկերոջ, նվիրյալ հայի և արժանապատիվ սպայի օրինակ է բոլորի համար:

Միջոցառմանը ներկա էին Արման Ստեփանյանի երեխաներն ու կինը՝ Էլեն Չարությունյանը, գաղափարակից ընկերները, ՀՀ Արցախի ԿԿ անդամ Ալյոնա Գրիգորյանը, ՀՀ ԱԵՄ-ի Ստեփանյանների Մարտունու, Ասկերանի և Մարտակերտի շրջանների մի խումբ անդամներ:

ՀՀ Արցախի երիտասարդական միության Կենտրոնական վարչության անդամ Վահագն Խաչատրյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ ամեն մի զինվորի ու սպայի կորուստը մեծ է մեր ժողովրդի համար:

«Ինչպես 44-օրյա պատերազմում, այնպես էլ դրանից առաջ Արցախի ազատության համար մարտիրոսված ամեն մի զինվորի ու սպայի կորուստը մեր ժողովրդի համար մեծ ցավ է, և յուրաքանչյուրս պարտավոր ենք միշտ հիշել ու վառ պահել նրանց հիշատակը», - ասել է Վ. Խաչատրյանը:

Նրանց հիշելով և նրանց մասին խոսելով միայն կարող ենք ապագա սերունդներին ճանաչելի դարձնել նրանց անձնավորական գործն ու սիրանքը:

Արման Ստեփանյանը ծնվել է 1981 թվականի նոյեմբերի 7-ին: 1999-2001թթ. ժամկետային զինծառայության է անցել հրետանային զորամասերում: 2003-ից սկսած՝ կենտրոնական ենթակայության

մի շարք զորամասերում զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ, իսկ 2014թ. հոկտեմբերին կամավոր տեղափոխվել է հյուսիսային պաշտպանական շրջան և նշանակվել զորամասի սպա-հոգեբանի պաշտոնում: Ծառայության մեջ իրեն դրսևորել է որպես խելացի, կարգապահ և կազմակերպչական ունակություններով օժտված սպա, մշտապես գտնվել է շարքային զինվորների կողքին, մարտական դիրքում, հոգեբանորեն նախապատրաստել մարտական խնդրի հստակ կատարմանը:

Իր առջեւ դրված մարտական խնդիրները Արմանն իրականացնում էր պատասխանատվության բարձր զգացումով և մեծ նվիրումով:

Բարեխիղճ ծառայության համար բազմիցս խրախուսվել է, պարգևատրվել ՀՀ ՊՆ գերատեսչական մեդալներով:

2015թ. սեպտեմբերի 4-ին՝ ժամը 16:20-ի սահմաններում, ծառայողական խնդիրը կատարելու ժամանակ հակառակորդի դիվերսանտների արձակած կրակոցներից Արման Ստեփանյանն ընկավ քաջի մահով՝ բռնելով անմահության ճանապարհը: Նա հասարակ զինվորական չէր, այլ հայրենիքի ընտրյալ պաշտպան, ով հանուն հայրենիքի գոհաբերեց ամենաթանկը՝ կյանքը:

ՀՀ Արցախի ԿԿ անդամ Ալյոնա Գրի-

գորյանը, ողջունելով նախաձեռնությունը, նշեց. «Արման Ստեփանյանը նվիրյալ ընկերոջ տիպար էր, գաղափարական ու խենթ ընկեր, որ օրինակ պետք է լինի երիտասարդների համար: Պատից կախված նկարը հաճախ շատ բան չի ասում, պետք է նրա անցած ուղին իմանաս»:

Ընկերներից Արայիկ Հայրապետյանը նշեց, որ Արմանը միշտ իր անձնական գործերը ստորադասում էր կուսակցական աշխատանքներին:

Վահագն Դադայանն էլ նշեց, որ Ար-

վանած արժեքներից», - ասել է Վ. Դադայանը:

Ընկերներից Սերգեյ Գարայանն ասաց, որ Արմանի մասին խոսելիս պետք է ընդգծել նրա նվիրվածությունը: Այն, ինչ պատմում են բոլորը, դրա մասին է:

«Այն, ինչ մենք տեսնում էինք՝ նրա նվիրվածությունը կուսակցությանը, ընկերներին, զինվորներին, մեծ էր: Միշտ պետք է հաշվի առնեք, որ այն գաղափարախոսությունը, որ ձեր մեջ կա, պետք է ծառայի ինչ-որ բանի: Եթե Դաշնակցության գաղափարախոսությունն եք կրում, այն պետք է ծառայի պետականությանը, նույնը՝ կրողը և այլն», - ասել է Ս. Գարայանը:

ՀՀ ԱԵՄ-ի նախկին անդամ Տաթևիկ Աղաջանյանը նշեց, որ Արման Ստեփանյանն իր մոտ տպավորվել էր իր ակտիվությամբ:

«Հաճախակի էր մասնակցում գրասենյակում կազմակերպվող խաղերին, երբ որ ժամանակ էր ունենում, անպայման գալիս էր երեխաների հետ, նույնիսկ համագետտով: Ընթացքում միշտ պատմում էր իր՝ որպես ԱԵՄ-ականի անցած ուղու մասին, թե ինչպես էին ցույց անում, ինչպես էին ուզում իրեն հեռացնել համալսարանից:

Մեր կյանքի ամենակարեւոր ու հետաքրքիր շրջանն այստեղ է անցել», - ասել է Տ. Աղաջանյանը:

Ընկերներից Կարեն Յուզեֆյանը նշեց, որ Արմանի նվիրվածությունը յուրահատուկ էր, որ Արմանը միշտ տարբերվում էր բոլորից իր համեստությամբ ու զսպվածությամբ:

«Ես շատ եմ շփվում Արմանի տղաների հետ, և կարող եմ վստահեցնել, որ իրենց հոր գործը արժանի շարունակողներն են լինելու», - ասել է Կ. Յուզեֆյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ



Երկու տարի առանց քեզ

Հուլիսյան տաքուկ առավոտ էր: Թվում էր՝ սովորական, մյուս օրերից չտարբերվող օր պիտի սկսվեր: Սակայն այդ օրը մեր գերդաստանի համար դարձավ ամենալուսավորը, ամենագունագեղն ու ամենաերջանիկը, քանզի լույս աշխարհ եկար դու՛ նոր կարգավիճակ տալով մորդ ու հորդ, հորեղբորդ ու հորաքրոջդ: Երկինքն ավելի պայծառացավ՝ չնայած հեռու-հեռուններում լսվում էր թնդանոթի համազարկ և ինքնաձիգների ճարճատյուն: Զո ծնունդով մի նոր զինվորի սիլուետ գծագրվեց երկնակամարում, որ պիտի դառնար Արցախ աշխարհի տերն ու տնօրենը...

Պապո Արտակ կոչեց քեզ, Արտակ, գուցե աչքի առաջ ունենալով քաջ Մոկացուն, որ Ավարայրի դաշտում հանուն հավատքի նահատակվեց...

Մուտքդ մեր գերդաստան ոչ միայն երկար սպասված էր, այլև՝ ցանկալի: Դու նման չէիր բոլոր այն մանչուկներին, որ այդ ժամանակ լույս աշխարհի էին եկել:

Զո մեջ կար անսովոր, ինքնատիպ ու յուրահատուկ մի բան, որ առաջին իսկ հայացքից զգացվում էր: Հաճախ փորձում էի ինչ-որ անուն տալ այդ զգացողությանը՝ խորաթափանցություն, թե՛ իմաստասիրություն: Եվ հիմա եմ հասկանում, որ այդ երկունս էլ միախառնված էին իրար ու քո մշտական ուղեկիցներն էին...

Մանկապարտեզ, դպրոց, բուհ, թե շարքային բանակ՝ ամենուր աչքի էիր ընկնում քո մաքրամաքուր ազնվությամբ ու շիտակությամբ, ճշտախոսությամբ ու կարգապահությամբ, ընկերներին չդավելու կարգախոսով և հայրենիքին ու հարազատներին անմաքորո նվիրվելու պատրաստակամությամբ...

Ուրիշ էր անգամ նայվածքդ ու ժպիտդ՝ խորախորհուրդ, վարակիչ, կյանք պարգեւող ու կյանքին վերադարձնող: Զեզ հետ մեկ անգամ շփվողը երբեք չէր կարող մոռանալ այն բավականությունը, այն դրական էներգիան, որ ճառագում էր քեզից...



- Մեծի հետ մեծ է, փոքրի հետ՝ փոքր, - լսում էինք քո մասին ասվածը և հպարտանում, որ դու մերն ես, մեր հարազատը: Ինչքան բախտավոր ու երջանիկ էինք քեզնով...

Ուրիշ էր նաև հարսանիքդ՝ սովորականից տարբերվող: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի ամեն ինչ քո սիրատուն քրոջ երեւակայական աշխարհի արգասիքն էր...

Չավակիդ՝ Ռուբենի ծնունդն ավելի է ամբողջացրել քո կերպարը՝ հոր ու ամուսնու կարգավիճակով... Աշխարհը՝ աշխարհ, քո բախկը՝ մի նոր աշխարհ: Սակայն պատերազմ կոչվածը տակնուվրա արեց ամեն ինչ...

Առաջին անգամ չէր, որ խաղաղ, անվրդով կյանքիդ

նոր երանգ հաղորդեցիր զինվորական համագետտով: Ապրիլյան պատերազմի օրերին ես ռազմի դաշտում էիր և հաղթանակով վերադարձար...

Սակայն այս մեկն այլ էր: Նախապես ամեն ինչ պլանավորված էր, անգամ ջահել-ջիվանների նահատակվելը, միայն թե ամուր կառչած ման իրենց աթոռներին:

Հրաշք լինեք, և դուք՝ անմահներդ, վերադառնայիք, իսկ աթոռներն էլ փոշիացնեին այդ անտոհմ, անհայրենիք, անհավատ փառասերներին, որ Հայաստան աշխարհս ու Արցախս շնչեին, դուրս գային հաշմված վիճակից...

Դարձյալ արե էր այդ օրը, դարձյալ ոսոխը բոլոր ուղղություններով կրակ էր թափում, բայց դու քո ընկերների հետ կանգնած էիր ձեզ վստահված դիրքում «Ոչ մի քայլ հետ» կարգախոսով ու մեծ հավատով, որ արցախցին կհաղթի...

Բայց թշնամին գտավ ձեզ՝ չինայելով ո՛չ ձեր մատաղ կյանքը, ո՛չ էլ ձեր հարազատների սիրատույնը զգացմունքները:

Անուպեր դարձաք, որ շողշողաք երկնակամարից ու լուսավոր պահեք հազար կողմից խոցված Արցախ աշխարհս...

Երկու տարի առանց քեզ, առանց քո ժպիտի, քո լիաթոք ծիծաղի և խորախորհուրդ հայացքի...

Չկա առավել անտանելի պատիժ, քան մեր այս կարգավիճակն է...

Հրաշք լինեք, ու դու վերադառնայիր, խնդով լցնեիր դատարկված տունդ, ժպիտ պարգեւիր տիկնոջդ, ծնողներիդ, սիրատուն, հրաշք Ռուբենիդ և բոլոր-բոլոր նրանց, ովքեր ճանաչում էին քեզ, իմ անմոռանալի, անգնահատելի՛ Արտակ...

Յուրաքույր Լիանետա ԻՃԻՍՆՅԱՆ

